ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 54
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
24-ը սեպտեմբերի 2021թ.

Նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը, որից 4- zoom.us հարթակով:

Նիստը նախագահում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանը:

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ. Աթոյան** /
2. 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: / Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /
3. Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը: / Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի պետ **Ն. Գրիգորյան** /
4. ԵՊՀ ԻՄ-ի 2022թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան** /
5. Ընթացիկ հարցեր

5.1. ԵՊՀ ԻՄ-ի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Թրահել Գերասիմի Վարդանյանի** հայկական կողմի խմբի ղեկավարությամբ «Արարատյան գոգավորության (Կենտրոնական Հայաստան) խիստ դեգրադացված էկոհամակարգերի պեդալոգիան և հողօգտագործման կայուն կառավարման ներուժը - II փուլ (հողի ջերմաստիճան և հողի խոնավություն)» խորագրով գիտական թեմայի նախագիծը ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ հայտերի մրցույթին ներկայացնելու համար երաշխավորելու մասին:

5.2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաշոշակ սահմանելու մասին:

5.3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում յուրաքանչյուր կիսամյակ ԵՊՀ ԻՄ-ի՝ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների և շրջանավարտների անուններով անվանական կրթաթոշակ սահմանելու մասին:

5.4. ԵՊՀ ԻՄ կառուցվածքային փոփոխությունների մասին:

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝

Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u> ՝ « ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար **Մ.Աթոյանի** հաղորդումը։

Նա մանրամասն ներկայացրեց նիստերի ժամանակացույցը, նշեց, որ ժամանակացույցը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության, ԵՊՀ-ի համապատասխան ժամանակացուցով, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցերը։ Նա նշեց, որ ընդգրկված հարցերը ստանդարտ և անհրաժեշտ հարցեր են, որոնք հիմնականում ունեն հստակ քննարկման ժամանակ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ, պրոֆեսոր Մ. Միքայելյաը և այլոք։

Մասնավորապես արտահայտվողները առաջարկեցին 2022թ.-ի նախահաշվի քնարկումը հունվար ամսվա փոխարեն իրականացնել 2021թ.-ի դեկտեմբերին, և հաստատել ներկայացված նախագիծը առաջարկվող փոփոխություններով։

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 54/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ</u> **՝** «2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԻՄՎ պետ **Ա.Դավթյանի** հաղորդումը:

Նա ներկայացրեց 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ հավելված 2: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 հատ անվանական կրթաթոշակ, որից 10 Մասնաճյուղի բյուջեի հաշվին է, իսկ 3-ը՝ արտաբուջետային է: Նա նշեց, որ գործող կարգերին համապատասխան հարցերը քննարկվել են ֆակուլտետների գիտական խորհուրդներում, և ուսումնական մաս են ներկայացրել համապատասխան ցուցակները: Այդ ցուցակներում նշված են 10 ուսանողներ, որից 2-ը արտաբյուջետային է: Նա նշեց, որ ստուգվել են ներկայացված բոլոր թեկնածուների համապատասխանությունը ԵՊՀ ԻՄ համապատասխան գործող կանոնակարգերի պահանջներին՝ ընդգրկված ուսանողներ ունեն առնվազն 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն: Նշվեց, որ քննարկումներին մասնակցել են նաև ԵՊՀ ԻՄ–ում գործող ուսանողական կառույցների ներկայացուցիչները:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի

պաշտոնակատար Վ. Ավագյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ.Սիմոնյանը, Գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը և այլոք։

Մասնավորապես ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը մասնակիցներին հիշեցրեց անվանական կրթաթոշակի հատկացման ընթացակարգային որոշ մանրամասներ, թե ինչպես են ընտրվում թեկնածուները և ներկայացվում հաստատման։ Իսկ Վ.Ավագյանը նկատեց, որ ՀԼԳ կրթական ծրագրից որևէ ուսանող չկա։ Նշվեց նաև, որ մեր ուսանողները ստանում են 10 հազար դրամ անվանական կրթաթոշակ։

Ա. Մակարյանը նշեց, նաև, որ կան նաև այլ կրթաթոշակներ. օրինակ «Ռեստարտ Իջևան» գիտակրթական ՀԿ-ն Մասնաճյուղում տալիս է մոտ տաս կրթաթոշակ, որոնց նույնպես մենք ենք ներկայացնում։

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ՝ «Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ԿԲԴՎ բաժնի պետ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը։

Նա մասնավորապես նշեց, որ ԿԲԴՎ բաժնի կողմից հաշվետու ուստարում իրականացվել են աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով՝ փաստաթղթերի մշակում և վերամշակում, կրթական ծրագրեր, հանդիպում-քննարկումներ, վերապատրաստումներ։

Փաստաթղթերից մշակվել են ԿԲԴՎ բաժնի կանոնադրությունը, «ԵՊՀ ԻՄ-ում ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը, «ԵՊՀ ԻՄ-ում հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգը, «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը, «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգը։ Վերանայվել է ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի՝ 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը։ Մշակվել և քննարկման փուլում են գտնվում պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները, մշակվում են ԵՊՀ ԻՄ փաստաթղթաշրջանառության կարգը, Հետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդական ուղեցույցը, վերապատրաստումների նոր ծրագրեր, ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգը։

Կրթական ծրագրերից պատրաստվել է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» 2020-21 կրթական ծրագիրը,

վերանայվել է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» 2021-23 կրթական ծրագիրը, վերանայվել և վերջնական տեսքի են բերվել «Հոգեբանություն» 2020 կրթական ծրագիրը, «Ռուսաց լեզու և գրականություն» 2020 կրթական ծրագիրը, վերանայվել և ստուգվել են 2021-2025 կրթական բոլոր ծրագրերը (առկա և հեռակա):

Հանդիպում-քննարկումներ են իրականացվել 2020-2021 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ վարող դասախոսների հետ:

Հաշվետու ուստարում բաժնի կողմից կազմակերպվել են հետևյալ վերապատրաստման դասընթացները.

1 «Աշխատանքը Zoom հարթակում»
2 Տեսանյութերը որպես դասավանդման գործիք»
3 «Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում»:

Բաժինը կազմակերպել և ապահովել է ԵՊՀ ԻՄ-ի մի շարք դասախոսների մասնակցությունը ԵՊՀ-ի հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից իրականացված 8 և Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի կողմից իրականացված 6 դասընթացներին: **Ն. Գրիգորյանի** ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ Ա. Մակարյանը և այլոք:

Մասնավորապես **պարոն Մակարյանը** նշեց, որ բաժնին հանձնարարել է առաջիկայում հանդես գալու տեղեկատվությամբ, թե մասնաճյուղի դասախոսները ինչ չափով են մասնակցել կազմակերպված դասընթացներին և ինչքան կրեդիտներ են կուտակել:

Որոշվեց.

Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի՝ 2020-2021 ուստարվա գործունեության մասին Ն.Գրիգորյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2022թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի 2022թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը նախապես քննարկվել է՝ հաշվի առնելով համապատասխան առաջարկությունները: Օրինակ՝ Բնական գիտությունների ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների կողմից առաջարկվել է մշակել կրթական ծրագրի ճյուղավորված տարբերակ՝ սարքավորումների ծրագրավորման ուղղության ներառմամբ և այլն:

Արտահայտվեցին՝ Վ.Աղաբաբյանը, Վ.Ավագյանը, Մ. Միքայելյանը, Գ. Սիմոնյանը և այլոք:

Մասնավորապես բ.գ.թ., դոցենտ **Վ.Աղաբաբյանը** առաջարկեց «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի անվճար տեղերից մեկը հատկացնել «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրին՝ ի նկատի ունենալով վերջինիս համար դիմել ցանկացողների թվաքանակի աճը:

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2022թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը, համաձայն հավելված 4-ի:
2. Ցանկը ներկայացնել ԵՊՀ՝ ՀՀ Կառավարություն փոխանցելու համար:

Ընթացիկ հարցեր:

5.1. Լսեցին՝ «ԵՊՀ ԻՄ-ի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Թրահել Գերասիմի Վարդանյանի** հայկական կողմի խմբի ղեկավարությամբ «Արարատյան գոգավորության (Կենտրոնական Հայաստան) խիստ դեգրադացված էկոհամակարգերի պեդալոգիան և հողօգտագործման կայուն կառավարման ներուժը - II փուլ (հողի ջերմաստիճան և հողի խոնավություն)» խորագրով գիտական թեմայի նախագիծը ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ հայտերի մրցույթին ներկայացնելու համար երաշխավորելու մասին›› Մ. Աթոյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ներկայացվող նախագիծը համարվում է հայ-գերմանական համագործակցության շրջանակներում 2017-2018 թթ. իրականացված «Հայաստանի կենտրոնական տարածքներում խիստ դեգրադացված էկոհամակարգերի պեդալոգիան և հողօգտագործման կայուն կառավարման ներուժը» նախագծի շարունակությունը: Շարունակական համագործակցությունն ու հետագա ծրագրի համար դիմումը նպատակաուղղված է երկու տարվա ընթացքում հողի ջրային հաշվեկշռի և հողի ջերմաստիճանի փոփոխությունների մոնիթորինգին և դրանք կլիմայական տվյալների հետ կապելուն, ինչպես նաև Արարատյան դաշտի հողերի վերաբերյալ լրացուցիչ ելակետային տվյալների ձեռքբերմանը: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել Արարատյան դաշտում հողօգտագործման հետևանքները, դրա հետ կապված առկա խնդիրները, սպասվող ռիսկերը և գնահատել հողօգտագործման կայուն կառավարման ներուժը: Այս ծրագրով գործընկեր բուհերի երիտասարդ գիտնականները հնարավորություն ունեն փոխանակման միջոցով ձեռք բերելու միջազգային փորձ: Հետևաբար, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի և Երևանի պետական համալսարանի հետազոտական ծրագրի նպատակը, 2016թ-ից նախագծում ներգրավված հայ և գերմանացի գիտնականների, դոկտորանտների և ուսանողների միջև չափազանց հաջող համագործակցության ընդլայնումն է: Ծրագիրը նպատակ ունի ոգեշնչել ուսանողներին ուսման առաջադեմ փուլերում (բակալավր, մագիստրոս) հողային կիրառական համակարգերի հետազոտությունների գիտական կարիերայի համար և խրախուսել նրանց մագիստրոսական կամ դոկտորական թեզի շրջանակներում աշխատել ատենախոսության վրա:

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թրահել Գերասիմի Վարդանյանի հայկական կողմի խմբի ղեկավարությամբ «Արարատյան գոգավորության(Կենտրոնական Հայաստան) խիստ դեգրադացված էկոհամակարգերի պեդալոգիան և հողօգտագործման կայուն կառավարման ներուժը - II փուլ (հողի ջերմաստիճան և հողի խոնավություն)» խորագրով գիտական թեմայի նախագծի մասին հաղորդումը ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ թեմաների հայտերի մրցույթին:

5.2 Լսեցին՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաշոշակ սահմանելու մասին հարցի վերաբերյալ Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշվեց, որ ԵՊՀ ԻՄ-ում գործում են 2 նախկին տնօրենների՝ լուսահոգի **Շավարշ Մարգարյանի** և **Համլետ**

Կարայանի անվան կրթաթոշակներ։ Առաջարկվեց նաև սահմանել ԵՊՀ ԻՄ-ի նախկին տնօրեն, ֆ.մ.գ.թ., դոցենտ բարեհիշատակ **Արտակ Ցուցուլյանի** անվան կրթաթոշակ։

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում սահմանել «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաշոշակ։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

5.3 Լսեցին՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում յուրաքանչյուր կիսամյակ ԵՊՀ ԻՄ-ի՝ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների և շրջանավարտների անուններով անվանական կրթաթոշակ սահմանելու մասին։

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում սահմանել ԵՊՀ ԻՄ-ի՝ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած ուսանողների և շրջանավարտների անուններով անվանական կրթաթոշակ՝ յուրաքանչյուր կիսամյակ մեկի անվամբ։
2. 2021-22 ուսումնական տարվա գարնանային կիսամյակում սահմանել Շիրակ Գասպարյանի անվան կրթաթոշակ։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

5.3 Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ կառուցվածքային փոփոխությունների մասին գիտխորհրդի նախագահ **Ա. Հ.Մակարյանը** մասնավորապես նշեց, որ ԵՊՀ իջևանի մասնաճյուղում մինչև այժմ հեռակա ուսուցման կրթական ծրագրերի բովանդակային իրականացումն ապահովվում էր ֆակուլտետներում՝ մասնագիտական ամբիոնների կողմից, իսկ հեռակա ուսուցման կազմակերպման ամբողջական պրոցեսը կառավարվում էր 2006 թվականից մասնաճյուղում գործող Հեռակա ուսուցման բաժնի կողմից։

Նա նշեց, որ ինչպես Մայր բուհում, այնպես էլ հանրապետության շատ բուհերում և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գործընթացը կազմակերպում են ֆակուլտետները և մասնագիտական ամբիոնները։

Այնուհետև Ա.Մակարյանը առաջարկեց առկա ուսուցման հետ ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման կրթական ծրագրերի կազմակերպման գործընթացի իրականացումը 2022թ. հունվարից ստանձնեն ֆակուլտետները՝ Հեռակա ուսուցման բաժնի աշխատակիցների ներուժն օգտագործելով ֆակուլտետներում:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 54/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. 2022թ. հունվարի 1-ից ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի գործառույթները տեղափոխել մասնագիտական ֆակուլտետներ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ